

ՀՅ ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ ԽՈՍՔԸ

Տիկնայք և պարոնայք պատգամավորներ,
Սիրելի բարեկամներ,
Սոցիալիստական կուսակցության և ՀՅԴ հարգելի ընկերներ,

Հնարավոր չէ, որ համաշխարհային հնչեղություն ունեցող երեք հարյուրամյակների՝ իրարից գրեթե ոչնչով չտարբերվելու հանգամանքը լինի ընդամենը պատահականության արդյունք: Դա, թերևս, կլսախտեր տրամաբանության օրենքները և հավանականությունների հաշվարկի կանոնները: Նախ, այս տարի Առաջին համաշխարհային պատերազմի և Ֆրանսիացի մտավորական և քաղաքական գործիչ Ժան Ժորեսի սպանության հիշատակման տարելիցն է: Մյուս կողմից, համայն աշխարհի հայությունը հաջորդ տարի պատրաստվում է ոգեկոչել Հայոց Ցեղասպանության հարյուրամյակը:

Երեք այս հարյուրամյակները հիշատակող միջոցառումներն ուղղակիորեն կապված են արյունահեղությունների հետ, իսկ ոգեկոչման հայտարարությունները մեզ անմիջապես հիշեցնում են Վերդենի ճակատամարտը և միլիոնավոր անմեղ զոհերին: Հիշեցնում են նաև անվախ մի մարդու, ով դարձավ մոլագար և կույր ազգայնականության զոհ:

Այդ միջոցառումները նույնքան սարսափով մեզ հիշեցնում են նաև դեպի մահը շարան-շարան գնացող հայորդիների մաքառման ուղին, ովքեր արմատախիլ եղան հազարամյակների իրենց հայրենիքից: Պարզ պատահականությունը չի կարող այդ աստիճան հնարամտորեն բոլոր այս փաստերը դասավորել մեկը մյուսի հետևից: Ակնհայտ է, որ այս իրադարձությունները փոխկապակցված են, և յուրաքանչյուրն իր մասով որոշակի դերակատարություն է ունեցել համաշխարհային պատմության մեջ և, անշուշտ, նաև՝ քիչ թե շատ նշանակալի ազդեցություն թողել մարդկության ճակատագրի վրա: Եթե չլիներ 1914 թ. օգոստոսին սանձազերծված պատերազմը, երիտթուրքերի ցեղասպանական նախագիծը կարող էր առնվազն հետաձգվել, և եթե չլիներ Ժորեսի սպանությունը կայսերական Գերմանիայի կողմից պատերազմ հայտարարելուց տառացիորեն օրեր առաջ, թեև քիչ, սակայն հավանական է, որ այդ պատերազմը չսանձազերծվեր նույնքան անարգել, և չլիներ այն ոգևորությունը և ազգային գրեթե բացարձակ միակամությունը, որոնց ականատես եղանք պատերազմը սկսվելուց հետո:

Ժորեսը պատկառելի մի անձնավորություն էր, և ահա, թե ինչպես է Ստեֆան Ցվայգը ներկայացնում Ժորեսին, ումով նա հիանում էր.

«...աստճանաբար տրտմությունը պարուրեց Ժորեսին, և սևեռուն մի միտք ծանրացավ նրա գոյության վրա. ինչպես խափանել երկու այս տերությունների միջև պատերազմը: Վերջին այս տարիներին նրա գործունեությունը հետապնդում էր գեթ մի նպատակ՝ անհնարին դարձնել նման գործացումը: Ժորեսն այլևս անտեսում էր իր հասցեին հնչող վիրավորական խոսքերը և համբերատարությամբ համաձայնում էր, երբ իրեն «բեռլինյան պատգամավոր» կամ «Վիլիելմ կայսեր էմիսար» էին հորջորջում: Նա թույլ էր տալիս, որ այսպես կոչված հայրենասերները ծաղրեն իրեն՝ պահելով անխնայ իր հարձակումները նրանց համար, ովքեր հրահրում են պատերազմը, ովքեր սադրում են մարդկանց հոգիները և ովքեր սերմանում են ատելություն:

Ֆրանսիական ժողովրդին արթնացնելու համար նախատեսված ճիչն արդեն սեղմվել էր Ժորեսի կոկորդում, երբ սովերի այդ մարդիկ նրան նետեցին հատակին, մարդիկ, ովքեր լավ գիտեին նրա անկոտորում կամքը, և ում ծրագրերին և պատմությանը Ժորեսը քաջատեղյակ էր: Քանի դեռ Ժորեսը ողջ էր, սահմաններն ապահով էին, ինչի մասին գիտեին նաև այդ մարդիկ: Բայց բավական էր, որ Ժորեսը սպանվի, անմիջապես սանձազերծվեց պատերազմը, և գերմանական յոթ բանակ ներթափանցեց ֆրանսիական տարածքներ»:

Ֆրանսիայի արդարադատության կողմից մարդասպանի արդարացման դատավարությունը, որը հետաձգվեց մինչև պատերազմի ավարտը, առաջ բերեց աշխատավոր դասի դժգոհությունը: Ընդ որում, մարդասպանին ներկայացրին

որպես մեծ հայրենասեր՝ դրանով իսկ արդարացնելով նաև ժորեսի սպանությունը: Եւ ուրեմն ինչ. ժորեսը, փաստորեն, դավաճան է: Մտքով անգամ հնարավոր չէ նման բան անցկացնել: Նրա մահից տասը տարի հետո նրա աճյունը տեղափոխվեց Պանթեոն: Եւ պատմական այս թյուրիմացությունն անկասկած պատճառաբանվում է ժորեսի թերևս չափավոր, բայց, անշուշտ, անհերքելի խաղաղասիրությունով: Ժորեսը գարշում էր պատերազմից և նա պատրաստ էր օգտագործել ձեռքի տակ եղած բոլոր միջոցները այն կանխելու համար: Մարդ, ով քաղաքական իր ողջ կարիերայի ընթացքում այդքան խոսել է բանակի դերակատարության մասին, այդ բանակը ցանկանում էր տեսնել միմիայն իր երկրի պաշտպանության մեջ: Ժորեսի հայրենասիրությունը բացարձակապես հեռու էր այդ ժամանակահատվածին հատուկ ազգայնական ազդեցիկից, և պատահական չէ նաև, որ նրան տվել էին «հումանիստ» որակավորումը և դրանով էլ բնութագրում էին ժորեսի սոցիալիզմը: Քաղաքական վարքագծի նրա կանոնները խարսխված էին արդարադատության հանդեպ խորը սիրո վրա: Ժորեսը չափավոր հանրապետականից վերածվեց խորապես հավատացած սոցիալիստի, երբ հատկապես համոզվեց, որ աշխատավորության շրջանակներում տիրում է անարդարությունը, և հասարակությունը կարիք ունի փոփոխության. այն պետք է դառնա ավելի մարդկային:

Դրեյֆուսի գործի ընթացքում մենք ականատես եղանք, թե ինչպես ժորեսը, սկզբում լինելով անտարբեր և նույնիսկ՝ հակառակորդ, աստիճանաբար դառնում է Դրեյֆուսի պաշտպանը և անհերքելի փաստերի ճշման տակ ընդունում է վերջինիս անմեղությունը՝ դրանով իսկ դեմ գնալով սարսափելիորեն մոլեռանդ հասարակությանը: Մի անձնավորություն, ինչպիսին ժորեսն էր, չէր կարող լռության մատնել Օսմանյան կայսրության ժողովուրդների, մասնավորապես հայերի տառապանքը՝ ի տարբերություն իր երկրի կառավարության: Դեռևս իր կենդանության օրոք ժորեսը սկսեց խոսել «Կարմիր սուլթան» մականունը կրող սուլթան Աբդուլ Համիդ II-ի կողմից կազմակերպված ջարդերի մասին: Որպես Պատգամավորների պալատի տաղանդավոր և համարձակ ներկայացուցիչ՝ նա սկսեց վարակիչ համոզմունքով խոսել Հայկական հարցի մասին: Այո, ժորեսը Հայ դատի մեծագույն պաշտպաններից էր, ով շատ կարճ ժամանակահատվածում դարձավ նաև եվրոպական հայասիրական շարժման առավել հայտնի և առաջատար դեմքերից մեկը:

Ժորեսի մետաղական ձայնը երեք անգամ թնդաց Պատգամավորների պալատում՝ կոչ անելով Ֆրանսիայի կառավարությանը և ընդհանրապես՝ Եվրոպային, արթնանալ թմբիքի և օգնության ձեռք մեկնել Օսմանյան իշխանությունների լծի տակ տառապող հայ ժողովրդին: 1896-ի հայկական կոտորածները սկսեցին մոլեգնել հենց հայոց հողերի վրա, և Ֆրանսիայի ու եվրոպական այլ երկրների անգործությունը վիրավորական և անընդունելի էր ժորեսի համար: Իսկ երբ կառավարության անդամներից մեկը հայ ազգի տառապանքների ողջ պատասխանատվությունը փորձեց գցել հայկական պաշտպանության հանձնաժողովների վրա, ժորեսը նրան պատասխանեց նոյեմբերի 3-ի իր ելույթով.

«Ահա, տասնութ տարի առաջ էր, պարոնայք, որ եվրոպական երկրները հանդիպեցին Բեռլինի կոնգրեսում և փաստեցին Թուրքիայում հայ հպատակներին պաշտպանելու անհրաժեշտությունը, նախքան Ֆրանսիայում կամ Լոնդոնում կհիմնվեին հայկական հանձնաժողովներ...»

...Պարոնայք, պարոն Կլեմանսոն մի քանի շաբաթ առաջ տպագրած մի հոդվածում ասաց, որ եթե այդ կոտորածները տեղի ունենային մեկ դար առաջ, ապա ողջ Եվրոպան առանց վարանելու կդիմեր Ֆրանսիային, և Ֆրանսիան էլ կարձագանքեր...»²

Այդուհանդերձ, ժորեսի և նրա ընկերների հետևողական ահազանգերը կարողացան արթնացնել եթե ոչ կառավարությունների, ապա գոնե Ֆրանսիայի և եվրոպական այլ երկրների հասարակական կարծիքը: Հայասիրական շարժումն սկսեց իր ուժերը կենտրոնացնել «Պրո Արմենիա» («Pro Armenia») երկշաբաթաթերթի վրա, որն սկսեց լույս տեսնել՝ համագործակցությամբ ԼՅԴ կուսակցության օրգան ժնևյան «Իբոշակ» ամսական պաշտոնաթերթի: «Պրո Արմենիա»-ի

2 www.jaures.eu/ressources/de_jaures/les-massacres-darmenie-1896/

խմբագրական կազմը բաղկացած էր ժորեսի անմիջական շրջապատի ներկայացուցիչներից և անձամբ՝ ժորեսից: Խմբագիրն էր Պիեր Քիյառը, իսկ խմբագրական կոմիտեի անդամներն էին ժորժ Կլեմանտոն, Անատոլ Ֆրանսը, Ժան ժորեսը, Ֆրանսիս դը Պրեսանսեն: Լույս տեսնելուց շատ չանցած, ամսագիրը դարձավ սուլթան Աբդուլ Համիդ II-ի ոճրագործ անգիջողականության դեմ ուղղված ամբիոն, որտեղից հնչեցին հայ ժողովրդին գորակցություն հայտնող կոչեր: Դրանց գումարվեցին նաև գիտաժողովները, մասնակցությունը միջազգային տարբեր հավաքներին և հանրային հանդիպումներին, որոնք բարենպաստ մթնոլորտ ձևավորեցին Հայկական հարցի շուրջ:

Խոսելով ժորեսին սպանողի կամ ավելի շուտ, սպանողների մասին՝ հանրապետության նախագահ Ֆրանսուա Օլանդը մեզ ասում էր, որ «... այդ մարդասպանները սպանել էին ավելին, քան ժորեսին. նրանք սպանել էին գաղափարը, նրանք սպանել էին արդարությունը, նրանք սպանել էին հույսը, նրանք սպանել էին խաղաղությունը»³: Նրանք սպանել էին նաև հայերի հույսը, ովքեր սպանությանը նախորդող օրերին հյուրընկալեցին եվրոպացի հանձնակատարերին՝ կոմիսարներին, որոնք եկել էին վերահսկելու Եվրոպայի կողմից թուրքական կառավարությանը պարտադրված բարեփոխումների ընթացքը, մի Եվրոպայի, որը վերջապես լքեցին զգաստացավ ժորեսի՝ մուրճի հարվածներին սմանվող խոսքերից: Մակայն հազիվ էր պատերազմը սանձազերծվել, երբ հանձնակատարները հապճեպ վերադարձան Եվրոպա՝ թողնելով հայ ժողովրդին բնաջնջվելու հենց իր իսկ բնօրրանում:

Թեև խոսքը հարյուր տարվա վաղեմություն ունեցող պատմության մասին է, սակայն այսօր էլ այդ իրադարձությունները չեն կորցրել աշխարհաքաղաքական իրենց արդիականությունը գլոբալ զարգացումների համատեքստում: Խորհրդային Միության անսպասելի և հանկարծակի փլուզումից հետո մեզ խոստացան ազատ շուկայական հարաբերությունների տևական խաղաղությունը և բարեկեցությունը: Մակայն, իրականում, աշխարհում ավելացավ միայն մարդկային տառապանքը: Աշխարհաքաղաքական այդ ցնցումից մոտ մեկ քառորդ դար հետո Հռոմի Ֆրանցիսկոս պապը մեզ զգուշացնում է երրորդ համաշխարհային պատերազմի իրականականության մասին, որն արդեն իսկ այսօր, ըստ էության, տեղի է ունենում աստիճանաբար, քայլ առ քայլ:

Բավական է՝ հայացք նետենք ժամանակակից աշխարհի վրա, որպեսզի մեզ հասկանալի դառնան աշխարհի տարբեր վայրերում բնակվող մարդկանց վախերի պատճառները: Չընդհատվող տնտեսական ձգնաժամերը, Միջերկրական ծովի ափերում բռնկված կրակը, որը շատերը կոչեցին «արաբական գարուն», և որից էլ ուղղակիորեն սերեցին մասնավորապես Իրաքում և Սիրիայում սկիզբ առած զագանությունները, ինչպես նաև՝ կրոնական ավելի ուժգնացող և զանգվածային դարձող արմատականությունը մտահոգություն են սերմանում անգամ ձգնաժամի օջախներից քիչ թե շատ հեռու գտնվող հասարակությունների շրջանում: Այս ընթացքը կանգնեցնելուն ուղղված վճռական գործողությունների բացակայությունը, ինչն անխուսափելիորեն կհանգեցնի նոր աղետի, մարդկանց հասցնում է հուսահատության դուռը: Աշխարհի երիտասարդները շփոթված են և իրենց տեղը չեն գտնում: Երիտասարդների շրջանում գործակալության մակարդակն աստիճանաբար ամրագրվում է տագնապալի սահմաններում: Ինչ կարելի է ակնկալել այս երիտասարդներից, որոնք իրենց անընդհատ զգում են անդունդի եզրին կանգնած: Կարող ենք արդյոք ակնկալել, որ իրենք ի վիճակի կլինեն, ինչպես վիետնամական պատերազմի ժամանակ՝ մոտ կես դար առաջ, կանգնեցնել չարդարացված և անհեթեթ պատերազմները: Դժվար է հաստատական պատասխան տալ այս հարցին: Ընդհակառակը, նրանց ներկայիս կարգավիճակը թերևս կստիպի ընտրել ջրհեղեղը:

Եւ քանի դեռ ուշ չէ, պետք է ինքներս մեզ հարց տանք, «իսկ ո՞վ է մեղավոր»: Նույն հարցն առաջանում է նաև կրոնական արմատականության մասով, մի երևույթ, որի միջոցով քաղաքակրթությունը փորձում է հետընթաց գրանցել՝ ունգրավ արագացմամբ: «Մառը պատերազմի» վերջում մեզ պատմեցին «պատմության ավարտի» և «գաղափարախոսությունների վախճանի» մասին՝ քարոզե-

3 François Hollande, Le discours de Carmaux, Fondation Jean Jaurès, 2014.

լով շուկայական հարաբերությունների պաշտամունքը: Հնարավոր է արդյոք, որ այդ ժամանակ մենք սխալվեցինք, երբ վերանայեցինք սոցիալիստական գաղափարախոսությունը: Արդյոք հենց սոցիալիստական կուսակցությունը չէր Հունաստանում, որ ականատես եղավ Աթենքի փողոցներ դուրս եկած հոծ բազմությունների, որոնք բողոքում էին այդ գաղափարախոսության դեմ: Սոցիալիստական գաղափարի դրոշակակիրները չէին արդյոք, որ անձանաչելի դարձրին այդ գաղափարախոսությունը ավանդական աջակիցների, այսինքն՝ աշխարհի ընչազուրկների աչքերում: Շրջելի է արդյոք լայն զանգվածների օտարումը սոցիալիստական կուսակցությունների քաղաքականությունից: Ինչպես կարելի է դրան հասնել: Մրանք հարցեր են, որոնց պատասխանները պետք է գտնենք առանց հապաղման: Եվ պետք չէ զարմանալ, որ մարդիկ, կորցնելով քաղաքական կառույցների հանդեպ ամեն տեսակի վստահություն, սկսում են դիմել իրենց հնարավոր դահիճներին՝ կրոնական ծայրահեղականությանը և ծայրահեղ աջ գաղափարախոսությանը: Ճիշտ գաղափարախոսության բացակայության հետևանքով, որը կօգներ բանական լուծումներ գտնել արդի կարևորագույն խնդիրներին, բոլորի հայացքները ուղղվում են դեպի անկանխատեսելի արդյունքներով պատահական լուծումների կողմը:

Քաղաքական արդիականության մեջ Հայաստանի և հայ ժողովրդի խնդիրներին առնչվող ուշադրության մյուս թիրախը, որը ևս ասոցացվում է ժորեսի անվան հետ, այսօր մտել է վճռական փուլ: Մերձավոր Արևելքի երբեմնի ծաղկուն հայ համայնքներն իրենց վրա են կրում ներկայիս քաղաքական ցնցումների ողջ դաժանությունը: Իրաքի և Սիրիայի հայերը կրկին դառնում են փախստականներ, իսկ տարածաշրջանում մնացած մյուս համայնքներն ապրում են մշտական լարվածության մեջ, ինչն էլ նպաստում է արտագաղթին: Հայաստանն ինքը հուսադրող վիճակում չէ, և Ադրբեյջանի ու Թուրքիայի կողմից պարտադրված կրկնակի շրջափակումը երկիրը դատապարտում է տնտեսական շնչահեղձման: Մյուս կողմից էլ՝ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը դեռ ուշանում է:

Պետք է խոստովանենք, որ ժորեսի գաղափարներն այսօր դարձել են անհրաժեշտություն և կարող են փրկօղակի դեր խաղալ: Միայն Աստված գիտի, թե որքան շատ են դրանք մեզ անհրաժեշտ:

Իրանք անհրաժեշտ են հատկապես մեզ՝ աշխարհի բոլոր ծայրերում սփռված հայերիս, մեր խնդիրներով հանդերձ, որոնք այսօր ավելի են բարդացել, քան ժորեսի օրոք: Ինչ պետք է անենք այս աշխարհում, որը լրջորեն շեղվում է խաղաղության ճանապարհից: Ինչ պետք է անենք այս աշխարհում, որտեղ չնայած մարդասիրական բոլոր գաղափարախոսությունների ինտելեկտուալ բարձր աստիճանին՝ շահը շարունակում է լինել ավելի գերակա, քան արդարադատությունը:

Մենք պետք է շարունակենք հավատարմորեն հետևել ժորեսի խորհուրդներին, ով, եթե հղում կատարենք Ստեֆան Ցվայգին, ասում էր. «Մարդկանց ուղեղները չեն կարողանում միանգամից ընկալել մեծ ճշմարտությունները, այլ պետք է մենք մտցնենք դրանք՝ առանց հանգստանալու, հատիկ առ հատիկ և ամեն օր: Ինչ խոսք...միապաղաղ և անշնորհակալ գործ է սա, սակայն մինևույն ժամանակ՝ այդքան խիստ անհրաժեշտ»⁴:

Բարեբախտաբար, արդեն միայնակ չենք այս պարտականության մեջ, ինչպիսին որ եղել ենք ժորեսից առաջ: Եվ մենք այլևս չենք մուրում այն, ինչ մերն է: Մենք այն պահանջում ենք, ինչպես ժորեսը:

Դոկտոր Մկրտիչ Մկրտչեան
Փարիզ, 3-ը նոյեմբերի, 2014 թ.
(թարգմանություն ֆրանսերենից)

4 www.jaures.eu/ressources/sur_jaures/jaures-par-stefan-zweig/